ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 32 (408)

www.syuniacyerkir.am

Վստահե՛ք, ընտրե՛ք, պահանջե՛ք...
Արթուր Մարտիրոսյան

Հարցազրույց ընտրությունների առիթով

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. «Քաղաքապետ չեն ընտրվում աշխատասենյակում նստելու համար. քաղաքապետը մշտապես պետք է ժողովրդի մեջ լինի»

Հոկտեմբերի 2-ին Կապանում կայանալիք ՏԻՄ ընտրություններում հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել: Երբեմնի երկբեւեռ Կապանի փոխարեն այսօր գործ ունենք եռաբեւեռ Կապանի հետ: Թե կապանցին իր վստահության քվեն ում կտա, ցույց կտա ժամանակը: Մինչ այդ կապանյան մի շարք խնդիրների, դրանց լուծման ուղիների, ստեղծված իրավիճակի մասին զրուցեցինք Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ, բայց ինքնառաջադրմամբ ընտրությանը մասնակցող Արթուր Մարտիրոսյանի հետ:

– Պարո՛ն Մարտիրոսյան, սյունիքյան քաղաքական կյանքում նոր դեմք եք, մինչ այդ Ձեզ ճանաչում էին որպես զինվորական գործիչ: Համառոտ բնութագրեք Ձեզ:

– Չեմ ուզում ինքս ինձ գնահատական տալ, ինձ ճանաչող կապանցիներն ավելի ճիշտ կբնութագրեն: Դպրոցական տարիներից սկսած՝ եղել եմ ազնիվ բոլորի հանդեպ, անմնացորդ նվիրումով ծառայել հայրենիքիս ու ժողովրդիս:

– Քաղաքում հայտնի եք որպես ազնիվ համբավ ունեցող անձնավորություն: Ինչո՞ւ որոշեցիք Կապան համայնքը գլխավորելու հայտ ներկայացնել՝ իմանալով, որ ստանձնելու եք (ընտրվելու դեպքում) չափազանց պատասխանատու եւ բարդ աշխատանք:

– Մեր հասարակության մեջ անընդհատ ասել են, որ քաղաքականությունն անբարոյականություն է, իսկ քաղաքական գործիչներն ասոցացվել են խաբեությամբ ու խարդախությամբ ժողովրդի հասանելիքը յուրացնողների հետ: Առաջադրել եմ թեկնածությունս, որ ընտրվելու դեպքում փոխեմ քաղաքական գործչի մասին ժողովրդի պատկերացումները:

Իմ առաջադրվելը բնավ քաղաքական խնդիր չէ, իմ կարծիքով, Կապան համայնքի ղեկավարն ավելի շատ տնտեսական մարդ պետք է լինի, կամային ուժեղ հատկանիշներով օժտված եւ սրտացավ: Տեսնելով մարդկանց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, քաղաքում առկա բազում եւ բազմաբնույթ խնդիրները, համեմատություններ անելով նախկինում կապանցիների արժանապատվության, նրանց ապրելակերպի հետ՝ ցավում եմ, որ այսօրվա կապանցին թե՛ բարոյահոգեբանական, թե՛ սոցիալ-տնտեսական վիճակով զգալիորեն տարբերվում է նախորդ շրջանի կապանցուց: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ որոշեցի համայնքի ղեկավարի թեկնածությունս առաջադրել: Քաղաքացիներիս վստահության քվեն ստանալու դեպքում կարող եմ համայնքի զարգացման համար լուրջ նախադրյալներ ստեղծել, կյանքի կոչել տարբեր ծրագրեր՝ ի նպաստ Կապանի եւ կապանցիների բարօրության: Իմ մեջ տեսնում եմ այն ներուժը, եռանդը, կամքն ու նպատակասլացությունը, որոնց շնորհիվ ծրագրերիս իրականացումը մեծ ձեռքբերում կհամարեմ: Հասկանալի է, որ համայնքի ղեկավարը շատ լիազորություններ չունի, բայց ժողովրդի հանդեպ սրտացավությունը, իսկապես ժողովրդին ծառայելու ցանկությունը բավարար են մի շարք հարցեր լուծելու համար:

– Հանրության մեջ հաճախ է քննարկվում հարցը, որ Արթուր Մարտիրոսյանը Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ է, բայց ինքնառաջադրվել է: Կարծիքներից մեկի համաձայն՝ այդ կուսակցությունն այլեւս այն կշիռը չունի Կապանում:

– Շատ նորմալ եմ համարում, երբ մարդու կուսակցական պատկանելությունը չի խանգարում վերկուսակցական գաղափարներ ունենալուն: Կարող էի եւ կուսակցության առաջադրմամբ մասնակցել ընտրություններին, բայց ինքնառաջադրվեցի, որ, նախեւառաջ, ապացուցեմ, որ մեր քաղաքում կուսակցական խնդիր չկա, կուսակցությունների ընդամենը միջոց են քաղաքի զարգացման

էջ 2

Հարգելի՛ կապանցիներ
Արցախյան պատերազմն ավարտել ենք մեծ հաղթանակով եւ փառքով:
Հաղթանակ, որ տվել է մեզ ազատություն եւ անկախություն:
Թեկնածությունս առաջադրել եմ, որպեսզի իմ հայրենանվեր եւ անբասիր աշխատանքով օգտակար լինեմ հայրենի Կապանին եւ նրա փառապանծ ժողովրդին:
Կապանցու բարեկեցիկ կյանքը մեր բոլորիս գերխնդիրը պետք է լինի:
Հարգելի՛ կապանցիներ, միասին հասնե՛նք այդ վերելքին, համատեղ ուժերով կերտե՛նք մեր երկրի ապահով եւ հզոր ապագան:
Փորձե՛նք միասին փոխել քաղաքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, մեր սիրելի Կապանը դարձնե՛նք ժողովրդավարության, փոխադարձ հարգանքի ու մարդասիրության վեհ դրսեւորումներով հագեցած օրինակելի քաղաք:
ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կապան համայնքի ղեկավարի թեկնածու

Մեր ձայնը՝ արժանավոր թեկնածու Արթուր Մարտիրոսյանին

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ
ԱԺ պատգամավոր

Կապան համայնքի ղեկավարի հոկտեմբերի 2-ին կայանալիք ընտրություններին համայնքի ղեկավարի համար իր թեկնածությունն առաջադրած Արթուր Մաքսիմի Մարտիրոսյանին (Վարիանտ) ճանաչում եմ սկսած դպրոցական տարիներից:

Արթուր Մարտիրոսյանը հերոսական ուղի է անցել: Նա Արցախյան ազատամարտի կարկառուն մասնակիցներից է: Երիտասարդ տարիքից սկսած հրամանատար է եղել եւ ղեկավարման երկարամյա փորձ ունի: Տեսակով հասարակ պահվածք ունի: Ազնիվ է, բարեխիղճ, գործունյա եւ շատ պատասխանատու: Մեծ հայրենասեր է, լավ ընկեր է, օրինակելի զավակ եւ ծնող:

Անմիջական է, կարգապահ եւ պահանջկոտ: Չի սիրում խոսել իր մասին: Երկար տարիներ ճանաչելով հանդերձ, միայն նրա կենսագրությունը կարդալուց հետո իմացա, թե ինչքան պարգեւներ ունի:

Առաջադրված մյուս երկու թեկնածուին անձամբ ճանաչում եմ: Ունեմ նորմալ հարաբերություններ, չեմ ցանկանում նրանց վատաբանել՝ փորձելով դրանով բարձրացնել մեր թեկնածուի դերը:

Նրանց կողմից արված եւ չարված գործերը կապանցիները տեսել են, եւ շատ նորմալ է, որ նրանք ունեն իրենց համախոհները: Ես չեմ ասի, թե մինչեւ հիմա Կապանում դրական աշխատանքներ չեն կատարվել, սակայն դեռ կան բազմաթիվ խնդիրներ, որոնք ենթակա են լուծման:

Համոզված եմ՝ մեր թեկնածուն ընտրվելու դեպքում բարեխղճորեն եւ պատասխանատու ձեւով կվերաբերվի առկա խնդիրներին:

Այսօր Կապանում տիրող բարոյահոգեբանական վիճակը որոշակի լարվածություն ունի:

Կապանում թասիբի պակաս կա:

Այս ընտրություններում կամ կապանցին ճիշտ ընտրություն կանի, կամ կշարունակի ապրել հարմարվողի հոգեբանությամբ:

Կապանին պետք է այնպիսի քաղաքապետ, ում ղեկավարությամբ քաղաքը կղեկավարվի առավել ինքնուրույն եւ առավելապես կապանցիների կողմից: Ես հավատում եմ, որ Արթուր Մարտիրոսյանին, իր կամային հատկանիշներով, կհաջողվի այս ամենը:

Կապանը փոքր քաղաք է: Համարյա բոլորն իրար ճանաչում են: Իրար հետ կապված են թե՛ բարեկամական, թե՛ ընկերական եւ թե՛ պաշտոնական կապերով:

Ցանկանում եմ՝ այնպիսի առողջ միջավայր ստեղծենք, որ յուրաքանչյուր ընտրող կարողանա քվեարկել իր խղճի մտոք եւ սրտի թելադրանքով:

Չլինի այնպես, որ որեւիցե մեկն օգտագործի իր դիրքն ու պաշտոնը դիմացինի վրա ներազդելու համար: Թող ոչ ոք չփորձի վախի մթնոլորտ ստեղծել, որովհետեւ դրանով իսկ ի ցույց կդնի, որ ինքը վախկոտ է: Թող ոչ մեկը պահի ոգեւորությամբ սխալներ թույլ չտա, որովհետեւ թե՛ ընտրություններից հետո, թե՛ ընդհանրապես, յուրաքանչյուրը պետք է կարողանա պատասխան տալ իր արարքների համար: Ես՝ որպես կապանցի, հորդորում եմ ընտրել Արթուր Մարտիրոսյանին: Հավատացած եմ, որ կապանցին ազատ ընտրություն կանի, եւ վաղը մենք կունենանք ավելի լավ Կապան, ավելի ուրախ եւ հպարտ կապանցի: ■

ՍԼԱՎԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (Բուլուշ)
Ազատամարտիկ

1988թ. ազգային զարթոնքի տարիներին շատ հայորդիներ ոտքի ելան՝ կերտելու մեր անկախությունը, ազատագրելու Ղարաբաղը: Եվ միայն կյանքը հայրենիքի զոհասեղանին դնելու իսկական պատրաստակամությամբ լցված, անմնացորդ նվիրումով օժտված մարդիկ կարողացան պատմության մեջ իրենց անունները թողնել:

Հայրենիքին անձնուրաց նվիրված, սեփական շահը երբեւիցե վեր չդասող, անհնարինը հնարավոր դարձնող (պատահական չէ, որ ստացել է Վարիանտ մականունը) անձնավորություն, ազատամարտիկ, հրամանատար է Արթուր Մարտիրոսյանը: Արցախյան պատերազմի տարիներին նրա հետ միասին եղել ենք մարտական գործողությունների ամենաթեժ կետերում, հաղթական ելքով շատ մարտեր մղել:

Նրա ազնվությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունն ու հայրենիքին, ընտանիքին անմնացորդ նվիրումը բավարար են հայրենի քաղաքը լավագույնս կառավարելու, զգալի փոփոխություններ կատարելու համար: Համոզված եմ՝ նրա՝ համայնքապետ ընտրվելու դեպքում համայնքային կյանքի շատ թերություններ կարճ ժամանակում կվերացվեն: Նրան մտահոգում են Կապանում առկա բազում խնդիրները, որոնց լուծման համար արդեն իսկ որոշակի ծրագրեր է կազմել:

Արթուր Մարտիրոսյանին առաջիկա ընտրություններում մաղթում եմ միայն հաղթանակ եւ ընտրվելու դեպքում շուտափույթ անցում պարտականությունների կատարմանը: ■

Հարցազրույց ընտրությունների առիթով

ՌԴ Ֆրունզեի անվան համազգային ակադեմիայում ուսանելիս

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.
«Քաղաքապետ չեն ընտրվում աշխատասենյակում նստելու համար. քաղաքապետը մշտապես պետք է ժողովրդի մեջ լինի»

էջ 1

նպաստելու համար: Առհասարակ արատավոր երեւույթներից մեկն էլ այն է, որ որոշ ղեկավարներ ընտրվելուց անմիջապես հետո ձեւավորում են իրենց թիմը՝ հիմքում դնելով կուսակցական պատկանելությունը: Իմ ընտրվելու դեպքում նման երեւույթ չի լինի քաղաքապետարանում, քանի որ քաղաքապետը բոլորինը պետք է լինի, քաղաքապետարանը՝ չկուսակցականացված:

Մի փոքրիկ օրինակ բերեմ. այս տարիներին մեր կուսակցության ուղարկած ամեն տեսակի օգնությունը բաշխվել է հավասարապես, ըստ մարդկանց կարիքի՝ առանց հաշվի առնելու կուսակցական պատկանելությունը:

– Ձեր հակառակորդները հաճախ են շահարկում փաստը, որ համապատասխան աշխատանքային փորձ, կրթություն չունեք. այդ հանգամանքներից ելնելով՝ ինչպե՞ս կարող եք հավակնել քաղաքապետի աթոռին:

– Հարցին հարցով պատասխանեմ. ինչպե՞ս կարող է պոլիտեխնիկ, պրոֆտեխուսումնարան ավարտած մարդը ղեկավարել քաղաքը, իսկ զինվորական բարձրագույն կրթություն (ՌԴ Ֆրունզեի անվան համազորային ակադեմիա, որտեղ ուսանել են նշանավոր ռազմական գործիչներ) ստացած մարդը՝ ոչ: 24 տարեկանից զբաղեցրել եմ ղեկավար պաշտոններ. զինվորական մասնագիտությունս զորքերի կառավարումն է, քաղաքացիական մասնագիտությունս՝ պետական կառավարումը: Աշխատանքային գործունեության տարիներին ղեկավարվել եմ նախեւառաջ զինվորին ողջ եւ առողջ պահելու սկզբունքով, որ իր մեջ ներառում է թե՛ բյուջե, թե՛ տնտեսություն, թե՛ պատասխանատվություն: Մի՞թե իմ անցած ճանապարհը կառավարման համապատասխան փորձ ունենալու մասին չի վկայում:

– Մինչ Ձեր առաջադրումը Կապանում, հատկապես վերջին չորս տարում, երկու բեւեռ կար: Ներկայումս, ի դեմ Ձեզ, ստեղծվել է երրորդ բեւեռ: Ո՞վ է, Ձեր կարծիքով, Արթուր Մարտիրոսյանի ընտրողը, այսպես ասած՝ սոցիալական ու քաղաքական հենարանը:

– Իմ ընտրողը կապանցին է: Առաջադրված մյուս երկու թեկնածու Արտուր Աթայանի եւ Աշոտ Հայրապետյանի հետ նորմալ հարաբերություններ ունեմ, երբեւիցե անձնական խնդիրներ չեմ ունեցել նրանց հետ եւ եթե թերություններ էլ նկատել եմ նրանց պաշտոնավարման ընթացքում, չեմ վարկաբեկել. դա իմ գործելակերպը չէ: Իմ առաջադրմամբ ժողովրդիս առաջարկում եմ ծառայությունս, որովհետեւ քաղաքապետը ծառայության պետք է գնա, ոչ թե աշխատանքի: Ինձ համար գերխնդիր չէ քաղաքապետի պաշտոնը շարունակական դարձնելը, այլ նպատակ ունեմ ժողովրդին ցույց տալ, թե ինչպես պետք է ղեկավարել քաղաքը, ճիշտ կառավարման ամուր հիմքեր դնել, այնուհետեւ էստաֆետը հանձնել երիտասարդներին. ժամանակը նրանցն է: Երիտասարդ քաղաքապետարան ձեւավորելն իմ առաջնային նպատակներից է, իսկ առավել փորձառու աշխատակիցներն իրենց գիտելիքներն ու փորձը պետք է փոխանցեն նրանց: Հավատացնում եմ՝ մեր քաղաքում գրագետ, քաղաքի հոգսերով ապրող երիտասարդական ներուժ կա, որին անպայման պետք է ներգրավել քաղաքի կառավարման գործում: Մի խոսքով՝ իմ ընտրազանգվածը բնակչության տարբեր խավերից է. կվստահեն, կընտրեն եւ կպահանջեն:

– Եվ, այնուամենայնիվ, Կապանում նոր քաղաքական իրավիճակ է ստեղծվել. այսինքն՝ մենք երբեմնի երկբեւեռի փոխարեն ունենք եռաբեւեռ քաղաք: Տարբեր սոցհարցումներ են կատարվում, որոնք, իհարկե, ոչ միշտ են իրական պատկերն արտացոլում: Այնուամենայնիվ, համայնքի ղեկավարի թեկնածու Արթուր Մարտիրոսյանն ուժերի նոր դասավորությունն ինչպե՞ս է գնահատում:

– Նոր իրավիճակը չեմ կարող ասել ինչպիսին կլինի, բայց, ընտրվելու դեպքում, իմ ղեկավարման օրոք քաղաքը կլինի միաբեւեռ, այն է՝ կապանցիների ընդհանուր շահը: Սոցհարցումները չեմ կարեւորում, քանի որ քաղաքապետարանի դիմաց սոցհարցում չեն կատարում, սրճարանում նստած որոշումներ չեն կայացնում: Քաղաքապետ չեն ընտրվում աշխատասենյակում նստելու համար. քաղաքապետը մշտապես պետք է ժողովրդի մեջ լինի, ծանոթանա մարդկանց հոգսերին, օրվա բոլոր պահերին հասանելի լինի նրանց, աշխատանքներ սկսի իրականացնել քաղաքի ծայրամասերից, ոչ թե միայն կենտրոնում՝ մարդկանց աչքին թոզ փչելու համար:

– Կապանը Հայաստանի հարավարեւելյան հատվածի ամենամեծ քաղաքն է, եւ ցանկություն հայտնել քաղաքապետ դառնալու, նշանակում է ինչ-որ բանի հետ

Մեր ձայնը՝ արժանավոր թեկնածու Արթուր Մարտիրոսյանին

ԱՅՑԵՔԱՐՏ

Արթուր Մարտիրոսյան. ծնվել է 1964թ. հոկտեմբերի 8-ին Կապան քաղաքում: 1971-1981թթ. սովորել եւ ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1982-1984թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում:
1984-1990թթ. աշխատել է «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորման Կապանի մասնաճյուղում:
1988թ. փետրվարից անդամագրվել է Ղարաբաղյան շարժմանը: Եղել է Երկրապահ կամավորների միության Կապանի տարածքային բաժանմունքի անդամ:
1990-2013թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, որից 1990-1993թթ. եղել է ՀՀ ԶՈՒ հատուկ գնդի Կապանի վաշտի հրամանատարի տեղակալ:
1993-1998թթ. նշանակվել է Կապանի նորաստեղծ բրիգադի 7-րդ (Կարմրաքարի) գումարտակի հրամանատար, մասնակցել Կապանի, Լաչինի, Կուբաթլուի, Զանգելանի, Ֆիզուլու, Ջաբրաիլի, Հորադիզի ուղղություններով մարտական գործողություններին:
1998-2002թթ. նշանակվել է գնդի հրամանատարի տեղակալ:
2002-2004թթ. ուսանել է Ռուսաստանի Դաշնության Ֆրունզեի անվան համազորային ակադեմիայում, ստացել բարձրագույն զինվորական կրթություն, ունի գնդապետի կոչում:
Ուսումն ավարտելուց հետո 2005-2013թթ. զբաղեցրել է բանակային կորպուսի հրամանատարի տեղակալի պաշտոնը:
2013թ. անցել է երկարամյա զինվորական ծառայության թոշակի:
2013 թվականից Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ է:
Պարգեւատրվել է ՀՀ «Մարտական ծառայություն», ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալներով, ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ Օզանյան», «Անբասիր ծառայության առաջին աստիճանի», «Անբասիր ծառայության երկրորդ աստիճանի», «Անբասիր ծառայության երրորդ աստիճանի», «ՀՀ զինված ուժեր-20 տարի» հոբելյանական մեդալներով, ԱՄՆ «Կանզասի Ազգային գվարդիայի», «Հայաստանի Երկրապահ», «97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի 15-ամյակ»-ի, ՀՀ Կապան համայնքի «Կապան», «ԼՂՀ զինված ուժերի 20 տարի» հոբելյանական հուշամեդալներով:
Ամուսնացած է, ունի երկու երեխա՝ ուստր եւ դուստր:

համաձայն չլինել: Առանձնացրեք Կապանի համար ամենաառաջնային մի քանի խնդիր:

– Հիմնական խնդիրը, որ նաեւ համապետական է, ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակն է: Այդ հարցը լիազորությունների սահմաններում պետք է լուծենք: Ասենք օրինակ՝ եթե ազատ տարածք կա, առանց «մաղարիչի» տրամադրել մարդկանց՝ որպես արհեստանոց կամ առեւտրի կենտրոն օգտագործելու համար: Այդտեղից ստացված գույքահարկը տեղական բյուջեն համալրելու ձեւ է, որով աշխատանքներ կարելի է իրականացնել քաղաքում, որ հետո չասենք, թե բյուջեի 95 տոկոսը ծախսվում է միայն աշխատավարձի համար: Կարճ ասած՝ փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար համայնքապետարանը պետք է խրախուսի յուրաքանչյուր նախաձեռնություն: Եթե գործարարները համոզված լինեն, որ իրենց ներդրած յուրաքանչյուր լուման նպատակին է ծառայում, ապա համայնքում ներդրումային քաղաքականությունը կաշխուժանա: Քաղաքում աղբահանության արդյունավետ կազմակերպման, քաղաքային լուսավորության, ծայրամասային թաղամասերի մայթերի բարեկարգման եւ մի շարք այլ խնդիրներ կան: Առավել կարեւոր է նաեւ մարզական կյանքի աշխուժացումը, որի վերաբերյալ իմ նախընտրական ծրագրում որոշ դրույթներ եմ ներկայացրել: Կապանի հիմնախնդիրներից է նաեւ քաղաքային գերեզմանոցի՝ օրեցօր մեծացող տարածքը, որ բնավ հաճելի տեսարան չէ: Ժամանակն է՝ լրջագույնս զբաղվել այս հարցով եւ գերեզմանատեղիի համար այլ տարածք տրամադրել:

– Հավանականությո՞ւն կա, որ Արթուր Մարտիրոսյանը կհրաժարվի հետագա պայքարից՝ հօգուտ այլ թեկնածուի:

– Կապանում բոլորն ինձ ճանաչում են որպես հաստատակամ ու վճռական անձնավորություն: Միայնակ լինեմ, թե կուսակցության հետ, մինչեւ վերջ կպայքարեմ, անգամ եթե պարտություն, ապա արժանապատիվ պարտություն:

– Հատկապես զբաղվածության հարցում կապանցին սեփական մաշկի վրա զգացել է ծանոթով աշխատանքի ընդունվելու փաստը: Նույնիսկ ամենահասարակ, առանձնակի մասնագիտական կարողություններ չպահանջող աշխատանքի տեղավորվելու համար մարդիկ հաճախ են բախվում սոցիալական անարդարության, ինչը ստիպում է չարանալ պետության դեմ:

– Համայնքապետարանի ենթակայության եւ ոչ մի աշխատակից իմ թշնամին չէ: Ինձ համար էական չէ, թե ով որ թեկնածուի «թիմից» է, յուրաքանչյուր մարդ իր ընտրության հարցում ազատ է: Բնականաբար, կադրային ջարդ չի նախատեսվում. դա իմ էությանը խորթ երեւույթ է: Այսօր իմ շրջապատում կան հարազատ մարդիկ, ովքեր այս պահին, տարբեր հանգամանքներից ելնելով, ինձ չեն աջակցում, բայց ես չեմ նեղանում: Առաջարկում եմ թեկնածությունս, ընտրվելու դեպքում ինձ հետ կաշխատեն գրագետ, փորձառու մարդիկ:

– Երիտասարդների՝ մայրաքաղաքից չվերադառնալը, կարծեք, սովորույթի ուժ է ստանում մեզանում, որը բավականին լուրջ խնդիր է համայնքի հետագա զարգացման համար: Ինչպիսի՞ քաղաքականություն պետք է վարել երիտասարդների մասնակցությունը համայնքային կյանքում աշխուժացնելու համար:

– Վերջերս տարբեր առիթներով շփվել եմ կապանցի երիտասարդների հետ եւ հաճելիորեն զարմացել նրանց ներուժի, քաղաքական հոգսերով ապրելու, դրանց լուծման ուղիներ փնտրելու կարողությունների վրա: Կողմ եմ երիտասարդ կադրերով աշխատավայրերը համալրելուն՝ իհարկե մեծահասակներից համապատասխան գիտելիքներն ու փորձը յուրացնելու նախապայմանով: Յուրաքանչյուր համայնքապետի հիմնական խնդիրներից է լավագույն աշակերտներին եւ ուսանողներին ճանաչելը, նրանց հնարավորինս շատ համայնքային կյանքում ներգրավելը:

– Համայնքի ղեկավարը պետք է կարողանա նաեւ տարբեր գերատեսչությունների հետ հանուն Կապանի զարգացման համագործակցել՝ տարբեր միջոցներով համայնքում ներդրումներ կատարելու համար:

– Զինվորական տարբեր պաշտոններ զբաղեցնելու տարիներիս համընկել է նաեւ այն ժամանակաշրջանը, երբ պաշտպանության նախարարը Սերժ Սարգսյանն էր: Եթե դժվարին այդ ժամանակ կարողացել եմ իմ ենթակայության ստորաբաժանումների հասանելիքը վերցնել, ուրեմն այս անգամ եւս տարբեր գերատեսչությունների հետ համագործակցության առումով խնդիր չեմ ունենա: Հավատացնում եմ՝ այն, ինչ կախված կլինի համայնքապետից, լիարժեք կկատարվի:

– Համայնքի կառավարման գործում կարեւոր դերակատարություն ունի ավագանին: Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր համագործակցությունն այդ ինստիտուտի հետ:

– Իմ կարծիքով՝ ավագանու ինստիտուտը լուրջ կայացման խնդիր ունի: Ուրախալի է, որ այս ընտրություններում ավագանու երեք կին թեկնածու է առաջադրվել. իմ խորին համոզմամբ, կանայք շատ հարցերում ավելի վճռական են եւ արագ են կողմնորոշվում: Բայց այս տարիներին ավագանու անդամներից երեւի եզակի մարդիկ են իրենց թաղամասի որեւէ խնդրի լուծման համար հարց բարձրացրել: Ավագանու անդամը միայն տարածք վերցնելու համար չէ:

– Որքան էլ մեր իշխանությունները նշեն, որ ուշադրության կենտրոնում են պահում պատերազմի վետերաններին, զոհվածների ընտանիքներին, ակնհայտ է մի փաստ. այսօր նրանց շրջանում նեղացածություն կա, նրանց վաստակն ըստ արժանվույն չի գնահատվում: Փոխարենն անարժաններն են հերոսի անվան տակ տարբեր արտոնություններից օգտվում:

– Միանգամայն համաձայն եմ ձեր դիտարկմանը, ով ով, բայց ես շատ լավ գիտեմ, թե ովքեր են իրականում մասնակցել Արցախյան պատերազմին եւ ինչպիսի վաստակ ունեն: Եթե համայնքապետ ընտրվեմ, ոչ միայն զոհված ազատամարտիկների ընտանիքները, այլեւ պատերազմի վետերանները կունենան հատուկ կարգավիճակ եւ կօգտվեն

էջ 4

ԳԱՌՆԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ
Պաշտոնաթող գնդապետ

Դեռեւս Կապանի տարածաշրջանում պատերազմական գործողությունները չէին սկսվել, երբ Արթուր Մարտիրոսյանը դարձավ ազգային զարթոնքի շարժման կազմակերպիչներից մեկը: Մոսկվայից կամավոր վերադարձա հայրենիք՝ ցանկություն հայտնելով մասնակցել հայրենիքի ազատագրման ու անկախության կերտման գործընթացին: Եկա Կապան, որտեղ էլ Արթուր Մարտիրոսյանի եւ ազգանվեր այլ հայորդիների հետ միասին սկսեցինք կազմակերպել հայրենի քաղաքի պաշտպանության, Ղարաբաղի անկախության գործընթացը:

Այդ տարիներին հայրենիքի պաշտպանության համար հանգանակված գումարները շատերը խաբեությամբ յուրացրին՝ սեփական գրպանները լցնելու համար, բայց Արթուր Մարտիրոսյանն այն եզակի հրամանատարներից էր, ով երբեւէ չմտածեց այդ օրհասական պահերին օգուտ քաղելու մասին:

Հպարտ եմ, որ համայնքապետ ընտրվելու ցանկություն է հայտնել հայրենիքի իսկական զավակը, ով ունի համապատասխան կազմակերպչական ունակություններ համայնքի ռացիոնալ ղեկավարման համար: Ոգեւորիչ է այն փաստը, որ կապանցիներին հնարավորություն է տրվել ունենալ երիտասարդ ղեկավար, որ իսկապես արժանի է ստանձնելու նման պաշտոն:

Մաքրահոգի, սրտացավ, հայրենիքին ու ընտանիքին անմնացորդ նվիրված մարդը, ինչպիսին Արթուր Մարտիրոսյանն է, արժանի է ղեկավարելու համայնքը, ինչի շնորհիվ միայն հնարավոր կլինի հատկապես երիտասարդ սերնդի շրջանում ձեւավորել բարեխիղճ քաղաքական գործչի կերպար: Պատերազմի օրերի բազում դժվարություններ հաղթահարած մարդը խաղաղ պայմաններում ստեղծված իրավիճակից ավելի հեշտությամբ կարող է ելք գտնել:

Այնպես որ՝ գլուխ եմ խոնարհում Արթուր Մարտիրոսյանի եւ նրա պես հայորդիների առջեւ եւ վստահորեն ասում, որ, հանձինս նրանց, մեր հայրենիքի պաշտպանությունն ամուր ձեռքերում է: Ուստի կոչ եմ անում վստահել նրան համայնքապետի պաշտոնը, քանզի ապագա սերունդը պետք է ճանաչի հայրենիքի զինվորներին, ովքեր ողջ կյանքում կծառայեն ժողովրդի բարօրության համար:

Անկախ ընտրությունների ելքից՝ նրանք մեր երկրի հեռարանն են, որոնց անունը կարմիր գույնով պետք է գրվի պատմության էջերում: ■

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Կենսաթոշակառու

Արցախյան շարժման տարիներին Զրմուղ-կոյուղու վարչության գլխավոր ինժեներ էի, իսկ հանրապետության հարավային սահմանում կառուցված մաքրման կայանում բանվորների անվտանգությունը հսկվում էր Արթուր Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Ազգասեր, աշխատասեր, հայրենիքին նվիրված, անանձնական շահով ապրող անձնավորություն է, ով պատերազմական թոհուբոհի տարիներին, հետագա զինվորական պաշտոններ զբաղեցնելու ընթացքում ոմանց նման սեփական գրպանի մասին չի մտածել, այլ աշխատել է ազնիվ մղումով:

Խորհրդային տարիներին Կապանի գործարանների շնորհիվ փողոցներում կանգնած պարապ մարդ չկար. կապանցու հպարտ ու արժանապատիվ կեցվածքի երաշխիքն ամենօրյա աշխատանքով զբաղվածությունն էր: Երբեմնի զանգեզուրյան ամենահարուստ քաղաքն այսօր ամենաաղքատների շարքում է, քանի որ այստեղ օրակարգային է մնում աշխատանք չունենալը: Իսկ աշխատանք չունեցող մարդու համար ե՛ւ ուսումն է անիմաստ դառնում, ե՛ւ կարողությունները՝ չեզոքանում, ե՛ւ ձգտումը լավագույնի հանդեպ՝ կորչում: Պարապությունից հասարակության մեջ գլուխ են բարձրացնում ամենաարատավոր երեւույթները: Այնպես որ՝ մեր հայրենի բնօրրանում յուրաքանչյուր համայնքապետի գերխնդիրն է հնարավորությունների սահմաններում աշխատատեղերի բացման նախադրյալներ ստեղծել, որ հետագա սերունդների առաջ հպարտանալու առիթ կլինի: Մենք հպարտ ենք խորհրդային տարիներին մեր ստեղծած արժեքներով, իսկ ինչո՞վ պետք է հպարտանա իմ որդին:

Համայնքապետը, բնականաբար, չի կարող համապետական նշանակության խնդիրներ լուծել, բայց կարող է թեկուզ դանդաղ քայլերով, նշմարելի փոփոխություն կատարել համայնքում, ինչը կոգեւորի, լավատեսության շունչ կհաղորդի ազգաբնակչությանը:

Արթուր Մարտիրոսյանի ընտրվելու դեպքում կցանկանամ, որ համայնքում յուրաքանչյուր աշխատանք հիմնովին կատարվի, որ համայնքային կյանքի բոլոր ոլորտներում քարը քարին դրվի, այլ ոչ թե քանդվի: Համոզված եմ՝ նա կլինի այնպիսի համայնքապետ, որի կատարած աշխատանքները հետագա սերունդները կկատարելագործեն՝ ունենալով ամուր հիմնաքար:

Վստահ եմ՝ եկել է քանդելու, ավիրելու ուղին բռնած ղեկավարներից զերծ մնալու ժամանակը: Ամենադանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջ շարժվող համայնքապետը միայն կարող է պայծառ ապագա ունենալու նախադրյալներ ստեղծել: ■

Նախընտրական ծրագրից

Քայլեր, որոնք մեր քաղաքը կդարձնեն բարեկարգ՝ վերականգնելով երբեմնի բարի մթնոլորտը

Քաղաքաշինություն եւ բնապահպանություն

- Քաղաքի փողոցների եւ բակերի բարեկարգում՝ առաջնահերթությունը տալով քաղաքի ծայրամասային թաղամասերին:
- Արդիականացնել քաղաքի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերը:
- Կրթօջախների, սպորտային համալիրների, մանկապարտեզների, արվեստի եւ մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում:
- Համատիրությունների գործունեության կազմակերպում եւ վերահսկում (հաշվի առնելով քաղաքացիների կարծիքը):
- Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում, շենքերի արտաքին տեսքի բարելավում:
- Շենքերի վերելակների անխափան շահագործում եւ անվտանգության ապահովում:
- Կազմակերպել եւ իրականացնել ջրային ռեսուրսների մաքրման եւ հետագա աղտոտվածությունը կանխարգելող միջոցառումներ:
- Կազմակերպել էկոլոգիապես վտանգավոր եւ վնասակար արտադրությունների վերացումը կամ դրանց համապատասխանեցումը գործող բնապահպանական պահանջներին:
- Քաղաքի լուսավորության կազմակերպումը դարձնել առավել արդյունավետ՝ կիրառելով արեւային էներգետիկ համակարգեր:

Կոմունալ ծառայություն

- Քաղաքի մաքրությունն ու աղբահանությունն ապահովելու համար ներգրավել տեխնոլոգիական նորագույն սարքավորումներ (մեքենայացում):
- Փողոցների սանիտարական մաքրումը եւ աղբահանությունը կազմակերպել գիշերային ժամերին:
- Թաղամասերի բնակիչների հետ վերանայել աղբամանների տեղակայման վայրերի հարմարավետությունը:

Տրանսպորտ

- Հասարակական տրանսպորտի անխափան եւ կանոնակարգված աշխատանքի կազմակերպման եւ զսպված սակագների վերահսկում:
- Մեծ հայրենական, Աֆղանստանի եւ Ղարաբաղյան պատերազմների վետերանների եւ զոհված ազատամարտիկների հարազատների համար սահմանել ներքաղաքային տրանսպորտով անվճար երթեւեկություն:
- Սահմանել ներքաղաքային տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի նկատմամբ հսկողություն:
- Հավուր պատշաճի բերել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառները՝ դրանք ապահովելով համապատասխան երթուղիների չվացուցակներով:
- Երթեւեկության կանոնների պահպանման նպատակով ուժեղացնել համագործակցությունը ճանապարհային ոստիկանության հետ:

Կրթություն, մշակույթ եւ սպորտ

- Հատուկ ուշադրություն դարձնել մատաղ սերնդի նախադպրոցական, դպրոցական կրթությանը եւ դաստիարակությանը:
- Յուրաքանչյուր կապանցի երեխա՝ ներառյալ անապահով ընտանիքի, պետք է ապահովված լինի իր նախընտրած մարզաձեւով եւ արվեստի ճյուղով զբաղվելու հնարավորությամբ:
- Աջակցություն ցուցաբերել ինչպես պրոֆեսիոնալ սպորտին, այնպես էլ յուրաքանչյուր կապանցու ընդհանուր ֆիզիկական պատրաստվածությանը՝ առաջնորդվելով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի, առողջ հոգիներով՝ առողջ քաղաք» կարգախոսով:
- Լրջագույնս ձեռնամուխ լինել մարզադահլիճների եւ համալիրների ավելացմանը, պայմանների բարելավմանը, մարզիկների նյութական ապահովվածության օժանդակմանը:
- Գրադարանների, թանգարանների եւ պատկերասրահի պայմանների բարելավում:
- Համագործակցություն արվեստագետների հետ:

Ֆինանսատնտեսական եւ սոցիալական բնագավառ

- Ձեւավորել իրատեսական քաղաքային բյուջե՝ շեշտը դնելով համայնքին պատկանող առեւտրային կազմակերպությունների գործունեության արդյունքում ստեղծված եկամուտների վրա:
- Անհրաժեշտ է հստակ վերլուծել տնտեսական ուղղությունները եւ հնարավորինս շատ ստեղծել համայնքապատկան առեւտրային կազմակերպություններ, որոնց գործարկմամբ միաժամանակ կապահովվի ինչպես քաղաքային բյուջեի համալրումը, այնպես էլ աշխատատեղերի ստեղծումը:
- Խրախուսել մանր եւ միջին բիզնեսը:
- Յուրաքանչյուր ներդրող, ինչպես նաեւ տեղաբնակ գործարար պետք է 3 տարով ազատվի ստեղծած ձեռնարկության զբաղեցրած տարածքի համար հողի հարկի եւ գույքահարկի վճարումից, եթե ստեղծում է առնվազն 20 աշխատատեղ եւ պարտավորվում է իր ձեռնարկության աշխատողներին վճարել ամսական աշխատավարձ՝ ոչ պակաս, քան տվյալ պահին օրենքով սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի քառապատիկը:
- Առաջնային ու հրատապ հիմնախնդիրների լուծման համար ֆինանսական միջոցներ ձեռք բերել՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների եւ բարերարների հետ:
- Համագործակցել հասարակական եւ երիտասարդական կազմակերպությունների հետ՝ օգտագործելով նրանց ներուժը քաղաքի զարգացման գործընթացում:

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կապան համայնքի ղեկավարի թեկնածու

Հարցազրույց ընտրությունների կապակցությամբ

Արթուր Մարտիրոսյանի ընտանիքը

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.
«Քաղաքապետ չեն ընտրվում աշխատասենյակում նստելու համար. քաղաքապետը մշտապես պետք է ժողովրդի մեջ լինի»

էջ 3

մի շարք արտոնություններից, որոնց մասին նախընտրական ծրագրում ներկայացրել եմ: Նրանց դերը հասարակության մեջ պետք է բարձրացվի: Ծրագրեր ունեմ նաեւ Բաղաբուրջի հուշահամալիրը բարեկարգելու ուղղությամբ:

– Ճակատագրի կամոք Կապանը շրջապատվել է պոչամբարներով, որ բացասական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա: Բնականաբար, կոչ չենք անում փակել հանքարդյունաբերական ձեռնարկությունները կամ սահմանափակել դրանց գործունեությունը, բայց վատ ազդեցությունը նվազագույնին հասցնելու որոշ քայլեր ձեռնարկելը ժամանակի հրամայական է:

– Այս ոլորտում խնդիրները բավականին լուրջ են ու բազմաթիվ, բայց դրանց լուծումը կախված չէ նույնիսկ մարզպետարանից: Պարզապես այդ հարցը պետք է բարձրացնել համապատասխան գերատեսչություններում, հասնել նրան, որ հանքարդյունաբերական ձեռնարկությունները ավելի շատ ներդրում կատարեն վնասակար ազդեցությունները նվազագույնին հասցնելու համար: Ես այն կարծիքին եմ, որ նմանատիպ քաղաքների համար համապետական բյուջե մտնող բնապահպանական վճարներից համայնքային բյուջեին մասհանում պետք է կատարվի՝ այդ ոլորտում որոշ հարցեր լուծելու համար: Ոգեւորությամբ ընդունվեց նաեւ պոչուկների վերամշակման գործարան բացելու լուրը, որը դեռեւս քննարկման փուլում է:

– 1988 թվականից ազգային զարթոնքի շարժման կազմակերպիչներից եք, անկախությունը կերտողներից: Ո՞րն էր Ձեր երազանքն անկախության ճանապարհը բռնելիս, եւ ի՞նչ ձեռքբերում ունեցանք:

– Միշտ երազել եմ ներկայիս գրավյալ տարածքում գտնվող «Խուստուփ» դիրքում, երբ պապիկ լինեի, թոռանս հետ նստեի եւ այդ բարձունքից նայեի հայոց այդ տարածքներին: 1994թ. հակառակորդից այդ դիրքն իմ հրամանատարությամբ ենք վերցրել: Շարժումը սկսելու ժամանակ բոլորիս երազանքը Ղարաբաղն ազատ ու անկախ տեսնելն էր: Իհարկե, անկախության հետ կապված երազանքներիս մի մասն իրականություն է դարձել, բայց ժամանակին համընթաց փոխվում են նաեւ մարդկանց պահանջները: Ամենամեծ ձեռքբերումը, իհարկե, մեր անկախությունն է՝ անկախ այս տարիներին մեր քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մի շարք այլ ոլորտներում առաջացած բազում խնդիրներից:

Զրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 16.09.2016թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: